ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2026 թվականի N 1356 - Ա

ԳՐԻԳՈՐԻ ՍՈՒՐԵՆԻ ԲԱԲԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՎՅԱՉԵՍԼԱՎ ԱՐԿԱԴԻԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ ՏԱՐԿԵՏՈՒՄՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 1135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 36-րդ հոդվածի 6-րդ մասի և հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 383-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանից հեռացվելու հիմքով դադարեցնել բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող՝

1) «Ռադիոտեխնիկա և կապ/ Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում» մասնագիտությամբ սովորելու նպատակով Գրիգորի Սուրենի Բաբանյանին (ծնվ.՝ 15.07.2007 թ.) տրված տարկետումը.

2) «Ավիացիոն և հրթիռային տեխնիկա/ Թռչող ապարատների ավիացիոն սարքավորումներ» մասնագիտությամբ սովորելու նպատակով Վյաչեսլավ Արկադիի Աղաջանյանին (ծնվ.՝ 04.06.2007 թ.) տրված տարկետումը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի օգոստոսի 14-ի «Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2025 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» N 1135-Ա որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 16-րդ և 44-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ